# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 134

**ք. Երևան** **03.06.2021թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 33/14.3/11182-2021, Շրջակա միջավայրի 2/02.5/7529-2021, Էկոնոմիկայի 01/7683-2021 նախարարությունների, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի և ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչությունների, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/4580-2021 և Կադաստրի կոմիտեի ԱԳ/4304-2021 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն **ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ բնակավայրի** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Ալավերդի համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերից **0.06 հա** գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր (կադաստրային ծածկագիր՝ 06-060-0224-0003) փոխադրել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Մ. Մկրտչյան